ԻՍԿՈՒՀԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ, ԹՇՆԱՄԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ 2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

DOI: 10.24234/JOURNALFORARMENIANSTUDIES.V2I69.181

ԱՄՓՈՓՈՒՄ

Այլատյացությունը ժամանակակից աշխարհում մարդկությանը սպառնացող մարտահրավերներից մեկն է, որն իր ցանկացած դրսևորմամբ կանխում է համագործակցության ցանկացած հնարավորություն: Առավել վտանգավոր է, երբ այլատյացությունը և ատելության խոսքը վեր են ածվում պետական քաղաքականության ու կարճաժամկետ, երկարաժամկետ հեռանկարներում կասկածի տակ դնում ժողովուրդների խաղաղ գոյակցությունը: Առանձնակի ուշադրության է արժանի Ադրբեջանի կողմից իրականավցող այլատյացության, հայատյացության դրսևորումները, որի ականատեսն եղանք նաև 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ:

Սույն հոդվածը նպատակ ունի վեր հանելու 2020թ. պատերազմի ժամանակ Ադրբեջանի կողմից այլատյացության տարածումն ադրբեջանական ԶԼՄ-ներում և սոցիալական հարթակներում:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ մեզ հետաքրքող ժամանակահատվածում ադրբեջանական լրատվամիջոցներն ու սոցցանցերը հեղեղվել էին հայերի նկատմամբ ատելություն պարունակող հայտարարություններով ու հրապարակումներով:

Իրականացված հետազոտության արդյունքում կարելի է պնդել, որ Ադրբեջանում ատելությունն այնպիսի համակարգային բնույթ էր կրում, որ վերածվել էր փակ շղթայի՝ սկսած իշխանություններից, ավարտած մշակութային

գործիչներով՝ ամեն անգամ արժանանալով հանրային հավանության: Առկա փաստերը վկայում են, որ հայատյացության քաղաքականության արդյունքում ադրբեջանական հասարակության մեջ լայնորեն տարածվում էր էթնիկ հիմքով խոշտանգումների և հայերի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հրապարակային գովեստը: Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ հակահայկականությունը գաղափարական հիմք է ծառայել 44-օրյա պատերազմի ընթացքում ռազմական հանցագործությունների և էթնիկ զտումների փորձերի համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. *հակամարտություն, հայատյացություն, պատերազմական հանցագործություն, միջազգային իրավունք, քարոզչություն, պարբերական մամուլ, սոցիալական ցանցեր:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը, թուրքական ստորաբաժանումների աջակցությամբ և կառավարման մարմինների անմիջական մասնակցությամբ, հրթիռային ու ավիացիոն հուժկու հարվածներ սկսեցին հասցնել Արցախի պաշտպանության բանակի պատասխանատվության գոտու ամբողջ խորությամբ՝ թիրախավորելով ռազմական օբյեկտները, խաղաղ բնակավարրերն և պետական ենթակառուցվածքները: Նոր լայնածավալ պատերազմն Արցախի դեմ տևեց 44 օր: Հարկ է նկատել, որ Ադրբեջանում հայատյացությունը լայնորեն փաստագրվեց 44-օրյա պատերազմից առաջ, ընթացքում և հետո, հատկապես ադրբեջանական ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի միջոցով: Այս քարոզչության պատճառով հայերի նկատմամբ բռնություն գործադրելու և նրանց սպանելու կոչերը, ինչպես նաև սոցիալական ցանցերում հայ խաղաղ բնակիչների և զինվորների նկատմամբ բռնության և դաժանության սարսափելի տեսարաններով հրապարակային գրառումները լայն հավանության և աջակցության արժանացան ադրբեջանական հասարակության կողմից **(ԱՀ ՄԻՊ զեկույց, 2020):**

Սույն հոդվածով նպատակ է դրված վեր հանելու 2020թ. պատերազմի ժամանակ հայատյացության դրսևորումները ադրբեջանական մամուլում և սոցիալական հարթակներում: Այդ նպատակով խնդիր է դրվել.

1. Բացահայտել պատերազմի օրերին պետական, հանրային գործիչների հայատյաց քարոզչությունները ադրբեջանական մամուլում, սոցիալական ցանցերում:
2. Վեր հանել պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կատարած հանցագործությունները՝ տեղադրված համացանցում:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ առ այսօր Ադրբեջանում շարունակական բնույթ են կրում հայատյացության դրսևորումները:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում տեղի ունեցող իրադարձությունների, հատկապես հակահայ դրսևորումների մասին տեղեկություններ են հաղորդում ՀՀ և ԱՀ ՄԻՊ գրասենյակների կազմված միջանյալ զեկույցները **(ԱՀ ՄԻՊ զեկույց, 2020; Report of the Ombudsman…., 2020):** Ադրբեջանի նախագահի ատելության խոսքի տարածմանն է անդրադարձել Մ. Մելքոնյանը **(Մելքոնյան Մ., 2021):** Ներկայացվող աշխատանքում ցույց է տրվում այն իրողությունը, ըստ որի Ադրբեջանում հայերի նկատմամբ հովանավորվող ատելության խոսքը մշտապես քարոզվել է պետական մակարդակով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, լրատվականներում տեղ գտած փաստերի քննության, սոցիալական հարթակում հավաքագրված տարբեր նյութերի համադրման մեթոդները: Ուսումնասիրությունն իրականացվել է առկա փաստերի համալիր քննության, համադրման միջոցով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պետական, հասարակական, մշակութային գործիչների թշնամանքի քարոզչությունը ադրբեջանական մամուլում, սոցիալական ցանցերում:

Ժամանակակից միջազգային իրավունքում ատելության խոսքն արգելված է մի շարք միջազգային փաստաթղթերով **(ՀՀ Փաստաբանների պալատ, 2017):** Իսկ Ադրբեջանի վարքագիծը, հատկապես 2020թ. պատերազմի օրերին, ուղիղ հակասում էր միջազգային իրավունքին և մարդասիրության սկզբունքներին: Չնայած այդ ամենի, Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ չկիրառվեց, չկանխարգելվեց ցեղասպան այն գործողությունները, որոնք համակարգված կերպով իրականացվեց Արցախի ժողովրդի դեմ՝ բացարձակ անպատժելիության մթնոլորտում:

Ադրբեջանում հայերի նկատմամբ պետության կողմից հովանավորվող ատելության խոսքը մշտապես քարոզվում էր երկրի ղեկավարության, մասնավորապես՝ նախագահ Իլհամ Ալիևի և նրա վարչակազմի կողմից: Ադրբեջանի նախագահի ուղերձը տարիներ շարունակ հստակ էր. Հայաստանը ագրեսոր է, Հայաստանը թույլ է, հայերը ֆաշիստ են և ահաբեկիչ, ուստի Հայաստանի և հայերի դեմ բոլոր ռազմական գործողություններն արդարացվում են: Ավելին. 2016-ից 2020 թվականներն ընկած ժամանակահատվածում Իլհամ Ալիևի ելույթներում նրա ռեժիմը ստեղծել էր «թշնամու կերպարը»՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում **(Սահակյան Ն., 2002):** Հարկ է նկատել, որ լրատվամիջոցներն ու սոցալական ցանցերը Ադրբեջանում օգտագործվել և շարունակվում են որպես զենք Ադրբեջանի կառավարության կողմից՝ այլատյաց և հակահայ հաղորդագրություններ տարածելու համար: Սա ներառում է վախի մթնոլորտի ստեղծումը, հայերի՝ կովկասյան տարածաշրջանի բնիկ ժողովուրդ լինելու ժխտումն և հայերին տարածաշրջանի խնդիրների, այդ թվում՝ պատերազմի մեջ մեղադրելը:

2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի ռազմական ագրեսիան ուղեկցվել էր հայերի նկատմամբ ատելության և բռնության տարածման հետևողական քաղաքականությամբ, որն տարածվում էր ինչպես տեղական լրատվամիջոցների, նույնքան և սոցիալական ցանցերի միջոցով: Վերը նշված բոլորը խրախուսվում էր Ադրբեջանի իշխանությունների կողմից: 44-օրյա

պատերազմի ընթացքում պետական տարբեր պաշտոնյաներ՝ պատգամավորից մինչև երկրի նախագահ Ի. Ալիևը, իրենց ելույթները համեմում էին հակահայկականության և ամենասուր ու հակամարդկային ձևակերպումներով: Ադրբեջանի նախագահի հայատյացության քարոզը լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով դառնում էր ադրբեջանցիների շրջանում մոբիլիզացնող միջոց: Այդ նույն բառերն էին օգտագործում նաև ադրբեջանական զինվորականները, հայկական կողմի զինծառայողների ու քաղաքացիական անձանց սպանության, նրանց խոշտանգելու ու անմարդկային վերաբերմունքի ենթարկելու տեսանյութերում, որոնք հրապարակվում էին Ֆեյսբուկ, Թվիթեր, Տիկ Տոկ-ի, Տելեգրամ և այլ սոցիալական ցանցերի միջոցով: Ի. Ալիևի շովինիստական խոսքերն իրենց գագաթնակետին հասան պատերազմի ավարտի հաջոդ օրը՝ 2020 թ. նոյեմբերի 10-ի ուղերձում, որտեղ մասնավորապես ասում էր հետևյալը. «...Մենք ծնկի բերեցինք նրանց, սրա-նրա փեշից կպած մարդ չմնաց, որ այս 40 և ավելի օրվա ընթացքում չզվեցնի, օգնություն չխնդրի, ինքն իրեն չնվաստացնի, մենք ենք նրան նվաստացրել, լավ ենք արել (ուղղված ՀՀ վարչապետին)....» **(Մելքոնյան Մ., 2012):** Ադրբեջանական լրատվամիջոցները, այդ թվում «1news.az», «ask.org.az», «defence.az», «trend.az», «haqqin.az», «minval.az», «news.day.az», «report.az», «vesti.az» լի էին հոդվածներով, հարցազրույցներով, գրառումներով և այլ նյութերով, որոնց միակ նպատակը էթնիկ հայերի նկատմամբ ատելություն և թշնամանք տարածելն է: Հարկ է նկատել, որ պետական մարմինների ու քաղաքական գործիչների կողմից օգտագործվող հայատյաց ճառերն ու արտահայտություններն նույնական էին:

Ադրբեջանի Միլի Միջլիսի պատգամավոր Ազեր Բադամովը իր ելույթում կոչ էր անում. «Պետք չէ բանակցությունների սեղանի շուրջ նստել ահաբեկիչների և վանդալների հետ, պետք է շարունակել նրանց ոչնչացման գործողությունները... Մենք պետք է հարձակողական գործողություններ իրականացնենք մինչև վերջ...» (https://www.trend.az/azerbaijan/karabakh/3314834.html11.12.2020): Սա վկայություն է այն բանի, որ Ադրբեջանի պետական պաշտոնյաներն ամենաբարձր

մակարդակով պարբերաբար մասնակցում են հակահայկական քարոզչության հրահրմանը, այլատյացության ու ատելության տարածմանը:

Ալիևի վարչակարգն իրեն քաջալերված էր զգում, քանի որ նրա ատելության խոսքն ու հայերի նկատմամբ բռնության քարոզը, այն էլ ԶԼՄ-ների և սոցիալական ցանցերի միջոցով, որևէ հետևանք չէր ունենում:

Պատերազմի օրերին ադրբեջանական մամուլը ողողված էր մշակույթի, արվեստի և սպորտի ներկայացուցիչների ելույթներով ու հայտարարություններով, որոնք ատելություն էին պարունակում էթնիկ հայերի նկատմամբ: Դա նշանակում էր, որ ատելության տարածումը տեղի էր ունենում մեծ շղթայով և Ադրբեջանում խրախուսվում էր բոլորի կողմից: Այսպես, ադրբեջանական «Ղարաբաղ» ֆուտբոլային ակումբի հասարակայնության և ԶԼՄ-ների հետ կապերի մենեջեր Նուրլան Իբրահիմովը Ֆեյսբուկի իր էջում գրում է. «Մենք պետք է սպանենք հայերին: Կարևոր չէ՝ դա կին է, երեխա, թե ծեր մարդ: Մենք պետք է սպանենք բոլոր նրանց, ում կարող ենք և ում էլ պատահի: Մենք չպետք է ափսոսանք զգանք, չպետք է խղճանք: Եթե մենք չսպանենք (նրանց), մեր երեխաները կսպանվեն» (**Report of the Ombudsman ...., 2020):** Ադրբեջանի ֆուտբոլային ֆեդերացիաների ասոցիացիայի ԶԼՄ-ների և հաղորդակցության մենեջեր Ֆիրուզ Աբդուլլահը իր սոցիալական էջում գրում է. «Կարեկցանքը ամենակարևոր, գուցե ամենաբարձր զգացողությունն է, որը պետք է սնուցեն բնությունը, կենդանիները և մարդիկ... Հայերը բացառություն են: Որովհետև հայը մի էակ է, որը ոչ մի կապ չունի իմ թվարկածի հետ...» (https://x.com/SaschaDueerkop/status/1322233635274215426): Բազմաթիվ էին նման գրառումները Ադրբեջանի մշակույթի, սպորտի ներկայացուցիչների կողմից: Պատերազմի առաջին օրերի հայտարարությամբ հանդես եկավ Ադրբեջանի ժողովրդական արտիստ Ֆիքրեթ Վերդիևը, ով ասում էր. «Ղարաբաղը մաքրվելու է հայկական ֆաշիզմի սատանայական թոհուբոհից». այդ հայ ֆաշիստները պատիվ չունեն և արդարացիորեն ոչնչացված են, իսկ նրանք, ովքեր մնացել են,

թող փախչեն մեր հայրենի հողից…»
(https://www.trend.az/life/socium/3319702.html):

Առկա վկայությունները փաստում են, որ այս արատավոր իրադարձությունները, որոնք դուրս են մարդկային երևակայության շրջանակներից և հակասում են միջազգային բոլոր պահանջներին, կրում են համակարգված և լայնորեն տարածված բնույթ՝ սկսած Ադրբեջանի քաղաքական իշխանություններից մինչև մշակույթի և սպորտի գործիչներ:

Ռազմական հարձակումների առաջին իսկ ժամանակահատվածում ադրբեջանցիների կողմից ատելության և դաժան վերաբերմունքի ու սպանությունների կոչերի տարածումը դարձել է ավելի համակարգված, ինչը հանգեցրել է չափազանց վտանգավոր չափերի: Այսպես Ադրբեջանի փաստաբանների կոլեգիայի իրավաբան Մուրադ Միրզեզադեն, Ֆեյսբուկի իր էջում գրառում կատարելով, նշում է. «…Պետք է սպանել և հայի մորը և երեխային» **(Report of the Ombudsman …., 2020):** Հայ երեխաների և կանանց նկատմամբ ատելության խոսքը սոցիալական ցանցերում օգտագործվում էր նրանց նկատմամբ բռնություն գործադրելու և հրահրելու համար: Ինչպես վկայում են հավաքագրված նյութերը, հայատյացությունն Ադրբեջանում վերածվել էր համաժողովրդական զբաղմունքի: Այդ ամենն արվում էր ադրբեջանական մեդիա ռեսուրսների հաշվին: Հարկ է նկատել, որ Հայաստանի ու հայերի թեմայի շուրջ նյութերում ու սյուժեներում ավելի հաճախ կարելի է հանդիպել հայհոյանքների, կոպիտ և վիրավորական արտահայտությունների: Ադրբեջանի մշակութային գործիչների «մրցակցությունը»՝ հայերին հայհոյելը, վիրավորելը, սեփական ժողովրդի մեջ հայատյացությունը տարածելը հատկապես պատերազմի օրերին ավելի էր վտանգավոր դառնում: Վերը նշվածները խոսում են այն մասին, որ Ադրբեջանում հանրային խոսքն ամբողջությամբ լցված էր հայերի նկատմամբ մեծ ատելությամբ, ինչը մեծ հովանավորություն էր ստացել իշխանավորների կողմից:

Ադրբեջանի զինված ուժերի հանցագործ արարքները, դրանց գովեստը սոցիալական ցանցերում: 2020թ. Արցախյան պատերազմն աննախադեպ էր իր

ծավալով, պատերազմական հանցագործությունների դաժանությամբ ու միջազգային մարդասիրական իրավունքի դեմ ոտնձգություններով: Միևնույն ժամանակ այն Բաքվի ավելի քան մեկ դար ձգվող հակահայ քաղաքականության արտացոլումն էր: Պատերազմի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի ռազմական հարձակումներն ուղեկցվել են հայ զինծառայողների, ռազմագերիների և քաղաքացիական անձանց մարմինների նկատմամբ խոշտանգումներով, խեղումներով, գլխատումներով, այլ վայրագություններով և անմարդկային վերաբերմունքով, ինչը էթնիկ հայերի նկատմամբ ատելության արդյունք է: Առավել մտահոգիչ է այն փաստը, որ այդ դաժանություններին հաջորդում էր վայրագությունների լուսանկարումը կամ տեսանկարահանումը և դրանց հրապարակումը: Ավելին. սոցիալական ցանցերի մոնիթորինգը ցույց է տալիս, որ ադրբեջանական կամ թուրքական օգտահաշիվներ կամ էջեր բացվում կամ ակտիվանում էր սպանվածների մասին տեսանյութեր և լուսանկարներ տարածելու հատուկ նպատակով: Նշված նյութերը տարածվում էին Ֆեյսբուկ, Ինստագրամ, Թվիթեր, Տիկ Տոկ, հատկապես Տելեգրամ սոցիալական ցանցերի միջոցով՝ թիրախավորելով հայաստանյան ԶԼՄ-ներին և սոցիալական ցանցերի հայ օգտատերերին, այդ թվում՝ անչափահասներին: Տելեգրամի օգտագործումը մեծացել էր պատերազմի օրերին և դարձել հայերի դեմ ուղղված ռասայական ատելության տարածման աղբյուր: Ռազմագործողութոունների ժամանակ Տելեգրամ և ՏիկՏոկ հարթակներում տեղադրվեցին տեսանյութեր՝ ադրբեջանական զինված ուժերի անդամների կողմից: Նկարահանված էր գերության մեջ գտնվելու ընթացքում հայազգի զինծառայողներին ծեծի, նվաստացնող վերաբերմունքի և ծաղրի ենթարկելու դեպքեր՝ անմիջապես գերեվարվելուց հետո և վայրից վայր տեղափոխելիս (**https://www.bellingcat.com/news/rest-of-world/2020/10/15/an**): Տեսանյութում մասնավորապես երևում էր ինչպես են ադրբեջանցի զինծառայողներն ապտակում, ոտքով հարվածում, հրմշտում և սուր գործիքով ծակծկում հայազգի ռազմագերիներին, գերեվարելու պահին սպառնում անդամախեղել, ուժի

ակնհայտ կիրառմամբ և նվաստացնելու բացահայտ նպատակով ստիպում նրանց համբուրել Ադրբեջանի պետական դրոշը, հայհոյել հայերին և հայտարարել, որ Ղարաբաղն Ադրբեջան է: Այս վայրագություններին զուգահեռ, ականատես ենք լինում ադրբեջանական սոցցանցերում օգտատերերի կողմից գովեստի, հպարտության խոսքերի՝ ուղղված հայ գերիների հանդեպ վայրագություններ կատարողներին: Այսպես, ոչ միայն Ադրբեջանի իշխանությունները, այլ նաև ժողովուրդը համացանցն օգտագործում էր ատելություն տարածելու և քարոզում սպանություններ՝ առանց հանդուրժողականության որևէ հնարավորության: Բազմաթիվ են սոցիալական հարթակներում ադրբեջանցի օգտատերերի ատելության խոսքի տարածման վկայությունները: Այսպես, սոցիալական հարթակում կարդում ենք. «Մենք պետք է խմենք հայերի արյունը ՝ անկախ տարիքից և սեռից» «Նախագահ, դանդաղ սպանեք հայերին, որպեսզի կարողանաք վրեժխնդիր լինել այն բանի համար, ինչ ձեր ուսուցիչն արել է անցյալում», «Ես ուզում եմ կամավոր միանալ ձեր բանակին՝ հայերին սպանելու համար: Ձեր պատերազմը մեր պատերազմն է» **(Special public report of the Ombudsman ….., 2020):**

Տարածվող տեսանյութերից ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի զինուժը խաղաղ բնակչության և զինվորականների հանդեպ թույլ է տվել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ, որոնք որակվում են որպես պատերազմական հանցագործություններ: Խոշտանգման և դաժան վերաբերմունքի դեպքերը վկայում են, որ Ադրբեջանը խախտել է մարդու իրավունքների ոլորտում իր ստանձնած միջազգային պարտավորությունները: Հայ խաղաղ բնակչության և զինծառայողների դեմ գործած վայրագությունների տեսագրությունները լայնորեն տարածումն սոցիալական ցանցերով, ևս անձի մարդկային արժանապատվության դեմ ոտնձգության հանցագործություն է: Պատերազմի ընթացքում տելեգրամյան ալիքներով և սոցիալական այլ ցանցերով տարածված մի շարք տեսագրություններում երևում էր, թե ինչպես են ադրբեջանական զինված ուժերի զինծառայողները խեղում և անարգում են

զոհված հայ զինծառայողների մարմինները: Տեսանյութերում ոճրագործները պարծենում են իրենց կատարած հանցագործություններով:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից հայ զինվորների և քաղաքացիական անձանց նկատմամբ խոշտանգումները, անմարդկային վերաբերմունքն ու դաժանությունը էթնիկ հայերի նկատմամբ Ադրբեջանի վարած ատելության քաղաքականության արդյունք են: Հաշվի առնելով վերը նշված բոլոր ապացույցները՝ ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի զինված ուժերի ռազմական հարձակումներն ուղեկցվել են զանգվածային լրատվության միջոցներում էթնիկ հայերի նկատմամբ համատարած ատելության հրահրմամբ, հատկապես սոցիալական մեդիայի հարթակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով խնդրո առարկան, հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

1. Պատերազմի օրերին ադրբեջանական մեդիա դաշտը, ինչպես նաև սոցիալական ցանցը հագեցած էր քարոզչական բնույթի նյութերով, որոնք կոչված էին հասարակության մեջ ամրապնդելու և միավորելու մինչ այդ էլ հետևողականորեն ձևավորված «թշնամի հայի» կերպարը, ապահովելու վրեժխնդրության, հակառակորդի հետ հաշվեհարդար տեսնելու մթնոլորտը:
2. Ալիևի վարչակարգի կողմից հրահրվող ատելության խոսքը, տարածաշրջանում ծայրահեղ ռասայական և էթնիկական անհանդուրժողականության և բռնության մշակույթ քարոզելու փորձ էր, որն ունեցավ իր հետևանքները: Այսօր այն օգտագործում են պետության կողմից հովանավորվող բոլոր լրատվամիջոցները, սոցիալական ցանցերը, համաժողովները, պատվիրակություններին, ելույթները և կրթական համակարգը մարդկային արժանապատվությունը նվաստացնող հաղորդագրություններ տարածելու, հայերին իրենց էթնիկական պատկանելության պատճառով սևացնելու, ինչպես նաև բռնություններն ու

պատերազմն օրինականացնելու նպատակով վախի մթնոլորտ ստեղծելու համար:

3. Վերլուծված տվյալները վկայում են ադրբեջանական հասարակության բոլոր շերտերում ծայրահեղական հայատյացության տագնապալի վիճակի մասին: Այս վտանգավոր երևույթը հանգեցրել է հայերի դեմ ռազմական հանցագործությունների՝ ելնելով նրանց էթնիկ պատկանելությունից: Հոդվածները, հարցազրույցները, հայտարարությունները, կարծիքները, ինչպես նաև տարածված տեսանյութերում վայրագություններն ու անմարդկային վերաբերմունքը Ադրբեջանի զինված ուժերը ցույց են տալիս, որ ռազմական հարձակումների առաջին իսկ օրվանից ատելության տարածումը և բռնության ու սպանության կոչերը դարձել են ավելի համակարգված:

Համառոտագրություններ

ԱՀ ՄԻՊ – Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան

ՀՀ ՄԻՊ - Հայաստանի Հանրապետություն Մարդու իրավունքների պաշտպան

Abbreviations

AH MIP (RA HRO) - The Human Rights Ombudsman of the Republic of Artsakh

HH MIP (RA HRO) - The Human Rights Ombudsman of the Republic of Armenia

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մելքոնյան Մ. (2021),** Հայատյացության դրսևորումներն ու «ատելության խոսքն» Իլհամ Ալիևի ելույթներում, «Արևելագիտության հարցեր», №20, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 72-86:
2. **ՀՀ Փաստաբանների պալատ (2017)**, Մասնագիտական կարծիք. Արցախյան հակամարտության և ադրբեջանական հանրապետության կողմից թույլ տված միջազգային իրավունքի խախտումների վերաբերյալ, Երևան, file:///C:/Users/user/Desktop/2025%D5%A9%E2%80%A4/Opinion_on_Artsakh_conflict_2017_arm-2.pdf (մուտք 15.09.2024):
3. **ԱՀ ՄԻՊ (2020)**, 2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արցախի բնակչության դեմ ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ երկրորդ միջանկյալ զեկույցի թարմացված հրատարակություն, միջանկյալ զեկույց, file:///C:/Users/user/Desktop/2025%01.10.2020_3%20(1).pdf.(մուտք 12.11.2023):
4. **Սահակյան Ն. (2022)**, Թշնամանքի հռետորական դեմքը. Ղարաբաղյան հակամարտությունը և հայերին անմարդկային դարձնելը Իլհամ Ալիևի ելույթներում, https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/14683857.2022.2153402?journalCode=fbss20. (մուտք 06.12. 2024):
5. Гянджинцы – потомки Джавад хана. Карабах будет очищен от дьявольского отребья армянского фашизма - народный артист Фикрет Вердиев, 19.10, 2020, https://www.trend.az/life/socium/3319702.html.(մուտք 07.10.2024):
6. В Азербайджане празднуют победу, а в Армении – траур и беспорядки. Вот, что значит наша сила! – народный артист Сабир Мамедов, 10.11. 2020, https://www.trend.az/life/interview/3332521.html. (մուտք 21.10.2024):
7. Напоминание от известного азербайджанского врача, 25.11.2020, https://www.trend.az/azerbaijan/karabakh/3340084.html. (մուտք 22.01.2025):

8. **Report of the Ombudsman of the Republic of Armenia and the Republic of Artsakh (2020),** Armenians in Azerbaijan as root causes of Ethnicallybased torture and inhuman treatment by the Azerbaijani Armed Forces (2020) September-November), Yerevan-Stepanakert. https://www.ombuds.am/images/files/2032f021fe81176414a649d588ad0e86.pdf. (մուտք 03.12.2024):
9. https://x.com/SaschaDueerkop/status/1322233635274215426.(մուտք 09.11.2024):
10. https://x.com/elbakyanedgar/status/1310100200376152064.(մուտք 26.11.2024):
11. @karabah_news,https://twitter.com/KarabakhRecords/status/1319203595368226818 /01.01.2021/(մուտք 06.12.2024):
12. @bagramyan26, 2020, https://mega.nz/file/ro1BzARR#9NDWrO7IHxmkPh04RYpjlif2O0wg8oUmXr7SK (մուտք 10.12.2024):
13. @bagramyan26, 2020, https://mega.nz/file/S0UnGIqQ#PfoD4Kc890BmIHBpCqrQqAXw5kcDtjo.(մուտք10.12.202):

REFERENCES

1. **Melkonyan M. (2021)**, Hayatyacowt'yan drsevorowmnern ow «atelowt'yan xosqn» Ilham Ali&i elowyt'nerowm /Manifestations of Armenophobia and "hate speech" in Ilham Aliyev's speeches/, "Questions of Oriental Studies", No. 20, Yerevan, YSU Publishing House, p. 72-86.
2. **The Chamber of Lawyers of the Republic of Armenia (2017)**, Masnagitakan karc'iq. Arcaxyan hakamartowt'yan ev adrbejanakan hanrapetowt'yan koghmic t'owyl tvac' mijazgayin iravownqi xaxatowmneri veraberyal /Professional opinion. On violations of international law committed by the Artsakh conflict

and the navigation of the Republic of Azerbaijan/, Yerevan, file:///C:/Users/user/Desktop/2025%D5%A9%E2%80%A4/Opinion_on_Artsakh_conflict_2017_arm-2.pdf (accessed 15.09.2024).

3. **RA HRO (2020)**, “2020 t'vakani september-hoktember amisnerin Arcaxi bnakchowt'yan dem adrbejanakan vayragowt'yownneri veraberyal erkrord mijankyal zekowyci t'armacvac' hratarakowt'yown” /"Updated edition of the second interim report on Azerbaijan's atrocities against the population of Artsakh in September-October 2020"/, interim report, file:///C:/Users/user/Desktop/2025% 01.10.2020_3%20(1).pdf. (accessed 12.11.2023).
4. **Sahakyan N. (2022)**, T'shnamanqi hr'etorakan demqy'. Gharabaghyan hakamartowt'yowny' & hayerin anmardkayin dard'nely' Ilham Ali&i elowyt'nerowm /The rhetorical face of hostility. The Karabakh conflict and inhumane treatment of Armenians in Ilham Aliyev's speeches/, https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/14683857.2022.2153402?journalCode=fbss20. (accessed 06.12. 2024).
5. Gyandzhintsy – potomki Dzhavad khana. Karabakh budet ochishchen ot d'yavol'skogo otreb'ya armyanskogo fashizma - narodnyy artist Fikret Verdiyev /The Ganja people are descendants of Javad Khan. Karabakh will be cleansed of the devilish scum of Armenian fascism - People's Artist Fikret Verdiev/, 19.10, 2020, https://www.trend.az/life/socium/3319702.html (accessed 07.10.2024).
6. V Azerbaydzhane prazdnuyut pobedu, a v Armenii – traur i besporyadki. Vot, chto znachit nasha sila! – narodnyy artist Sabir Mamedov /Victory is being celebrated in Azerbaijan, while mourning and riots are taking place in Armenia. That's what our strength means! – People's Artist Sabir Mammadov/, 10.11. 2020, https://www.trend.az/life/interview/3332521.html. (accessed 21.10.2024).
7. Napominaniye ot izvestnogo azerbaydzhanskogo vracha /Reminder from a famous Azerbaijani doctor/, 11.25.2020,

https://www.trend.az/azerbaijan/karabakh/3340084.html. (accessed 22.01.2025).

8. Report of the Ombudsman of the Republic of Armenia and the Republic of Artsakh, (2020) Armenians in Azerbaijan as root causes of Ethnicallybased torture and inhuman treatment by the Azerbaijani Armed Forces (2020) September-November), Yerevan, Stepanakert.https://www.ombuds.am/images/files/2032f021fe8.pdf.(accessed 03.12.2024):
9. https://x.com/SaschaDueerkop/status/1322233635274215426.(accessed 09.11.2024):
10. https://x.com/elbakyanedgar/status/1310100200376152064.(accessed 26.11.2024):
11. @karabah_news,https://twitter.com/KarabakhRecords/status/1319203595368226818 (accessed 06.12.2024):
12. @bagramyan26, 2020 https://mega.nz/file/ro1BzARR#9NDWrO7IHxmkPh04RYpjlif2O0wg8oUmXr7SK (accessed 10.12.2024):
13. @bagramyan26, 2020, https://mega.nz/file/S0UnGIqQ#PfoD4Kc890BmlHBpCqrQqAXw5kcDtT_8SOW6Dtd_tjo (accessed 10.12.202):

Iskui Avanesyan

Propaganda of hatred and hostility in the azerbaijani media and on social networks during the 2020 war

Conclusion

Key words and expressions: *conflict, armenophobia, war crime, international law, propaganda, press, social networks.*

Xenophobia in the modern world is one of the challenges threatening humanity, which in any form prevents any possibility of cooperation. It is all the more dangerous when xenophobia and hate speech rise to the fore in public policy and cast doubt on the peaceful coexistence of peoples in the short and long term.

The manifestations of xenophobia and Armenophobia on the part of Azerbaijan deserve special attention, which we also witnessed during the 44-day war in 2020. The purpose of this article is to identify the spread of xenophobia by Azerbaijan during the 2020 war in the Azerbaijani media and social networks.

The research conducted in the article shows that during the period we are interested in, Azerbaijani media and social networks were flooded with statements and publications containing hatred of Armenians.

As a result of the conducted research, it can be argued that hatred in Azerbaijan is so systemic that it has turned into a closed chain, starting from the authorities and ending with cultural figures, each time receiving public approval. The available facts indicate that as a result of the policy of Armenophobia, public praise of ethnic torture and inhumane treatment of Armenians has become widespread in Azerbaijani society. Summing up, we can state that anti-Armenians served as the ideological basis for war crimes and attempts at ethnic cleansing during the 44-day war.

Искуи Аванесян

Пропаганда, ненависти и враждебности в азербайджанских сми и в социальных сетях во время войны 2020 г.

Заключение

Ключевые слова и выражения: *конфликт, армянофобия, военное преступление, международное право, пропаганда, пресса, социальные сети.*

Ксенофобия в современном мире является одним из вызовов, угрожающих человечеству, которое в любом своем проявлении препятствует любой

возможности сотрудничества. Тем опаснее, когда ксенофобия и разжигание ненависти поднимаются на первый план в государственной политике и ставят под сомнение мирное сосуществование народов в краткосрочной и долгосрочной перспективе.

Особого внимания заслуживают проявления ксенофобии и армянофобии со стороны Азербайджана, свидетелями которых мы стали также во время 44-дневной войны 2020 года.

Цель этой статьи-выявить распространение ксенофобии Азербайджаном во время войны 2020 года в азербайджанских СМИ и социальных сетях. Исследования, проведенные в статье, показывают, что в интересующий нас период азербайджанские СМИ и социальные сети были наводнены заявлениями и публикациями, содержащими ненависть к армянам. В результате проведенного исследования можно утверждать, что ненависть в Азербайджане носит настолько системный характер, что превратилась в замкнутую цепочку, начиная от властей и заканчивая деятелями культуры , каждый раз получая общественное одобрение. Имеющиеся факты свидетельствуют о том, что в результате политики армянофобии в азербайджанском обществе широко распространилась публичная похвала этническим пыткам и бесчеловечному обращению с армянами. Подводя итог, мы можем констатировать, что антиармянство послужило идеологической основой для военных преступлений и попыток этнических чисток во время 44-дневной войны.

Իսկուհի Ավանեսյան - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, iskuhi82@mail.ru, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Հասարակագիտության ամբիոնի դոցենտ, iskuhi.avanesyan@asue.am https://orcid.org/0009-0005-2491-5058

Искуи Аванесян - Институт истории НАН РА Научный сотрудник отдела армянского вопроса и истории геноцида армян, кандидат исторических наук, iskuhi82@mail.ru, Доцент кафедры социальных наук Армянского государственного экономического университета, iskuhi.avanesyan@asue.am

Iskui Avanesyan - Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia Researcher at the Department of the Armenian Question and the History of the Armenian Genocide, Ph.D. in History, iskuhi82@mail.ru, Associate Professor, Department of Social Sciences, Armenian State University of Economics, iskuhi.avanesyan@asue.am

Խմբագրություն է ուղարկվել 20.03.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 07.04.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.